

Էդուարդ Չոհրաբյան, Արշալույս Տետեյան

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սոցիալական իրավունքներ, եվրոպական կառույցներ, զբաղվածություն, աղքատության հաղթահարում, եվրոպական սոցիալական խարտիա, սոցիալական մարտահրավերներ, սոցիալական համախմբվածություն, Հազարամյակի զարգացման նպատակներ

Հայաստանի Հանրապետության և Հարավային Կովկասի մյուս հանրապետությունների և եվրոպական կառույցների հարաբերություններում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում սոցիալական ոլորտը: Սոցիալական իրավունքները եվրոպական ժողովրդավարական արժեքային համակարգի անբաժանելի մասն են: Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած մի քանի տասնամյակների ընթացքում միջազգային, այդ թվում նաև եվրոպական տարածաշրջանային կառույցների կողմից մշակվել և ընդունվել են սոցիալական ոլորտին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր՝ կոնվենցիաներ, բանաձևեր, համաձայնագրեր, հանձնարարականներ: Դրանցից են 1976 թ. ուժի մեջ մտած Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագիրը, 1961 թ. Եվրոպայի խորհրդի (ԵԽ) կողմից ընդունված Եվրոպական սոցիալական խարտիան, 2000 թ. Սարդու հիմնարար իրավունքների ԵՄ խարտիան և այլն:

1990-ական թթ. համաշխարհայնացման (գլոբալիզացիա) գործընթացը նպաստեց տնտեսության առաջընթացին: Սակայն այս աննախադեպ տնտեսական առաջընթացը չնախանշեց նաև սոցիալական վիճակի բարելավում: Հակառակ տնտեսական հաջողություններին սոցիալական անհավասարությունը խորացավ, աճեց գործազրկությունը, աղքատությունը: Սրանք համաշխարհայնացման մարտահրավերներն էին: Արդեն 1995 թ. մարտին Կոպենհագենում գումարվեց սոցիալական հարցերին նվիրված գազաթնաժողով, որտեղ առաջ քաշվեցին մի շարք հարցեր՝ աղքատության հաղթահարում, զբաղվածության, կրթության, առողջապահության հասանելության ապահովում և այլն:

Կոպենհագենի գազաթնաժողովից հետո եվրոպական կառույցները վերախմբագրեցին սոցիալական ոլորտին վերաբերող փաստաթղթերը՝ նոր մարտահրավերներին ու համաշխարհային օրակարգին համապատասխան: 1996 թ. վերանայվեց Եվրոպական սոցիալական խարտիան: 1997 թ. Եվրոպայի խորհրդի երկրորդ գազաթնաժողովում առաջնային հարցերից մեկը սոցիալական ոլորտն էր:

Քայլեր ձեռնարկվեցին սոցիալական համախմբվածության ռազմավարություն մշակելու ուղղությամբ: ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից ստեղծվեց

Սոցիալական համախմբվածության եվրոպական հանձնաժողով (ՍՀԵՀ), իսկ 2001 թ.՝ հաստատվեց սոցիալական համախմբվածության գործողությունների զարգացման ռազմավարություն¹:

1995 թ. Կոպենհագենի գագաթնաժողովից հետո համապատասխան փոփոխություններ տեղ գտան նաև Եվրոպական միության (ԵՄ) գործունեության մեջ:

Սոցիալական ոլորտը 1990-ական թթ. դարձավ եվրոպական կառույցների և Հայաստանի ու հարավկովկասյան մյուս հանրապետությունների հարաբերությունների կարևոր հարցերից մեկը:

Սոցիալական մարտահրավերները, որոնց բախվել էին զարգացած արևմտյան երկրները, առավել սուր դրսևորվեցին Հայաստանում, ինչպես նաև Խորհրդային Միության նախկին հանրապետություններում: Այս հանրապետություններում անկում ապրեցին համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալները, աճեց գործազրկությունը, գրանցվեցին աղքատության բարձր ցուցանիշներ, մեծ չափերի հասավ միգրացիան, տեղի ունեցավ կենսամակարդակի անկում:

Հայաստանի դրությունը առավել ծանր էր, քանի որ Հայաստանը գտնվում էր շրջափակման մեջ, կորուստներ էր կրել 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով, կազմալուծվել էր տնտեսությունը: Ըստ տարբեր հետազոտությունների արդյունքների բնակչության 97 %-ը գտնվում էր ոչ պաշտոնական «աղքատության բացարձակ սահմանից» ցած²:

Սոցիալ-տնտեսական ճգնաժամը հաղթահարելու գործում մեծ է եվրոպական կառույցների՝ Եվրոպական միության (ԵՄ), Եվրոպայի խորհրդի (ԵԽ), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) նյութական, փորձագիտական, տեխնիկական աջակցությունը: 1991 թ. Եվրոպական Հանձնաժողովի (ԵՀ) կողմից ստեղծվեց Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) տեխնիկական աջակցության ծրագիրը՝ ՏԱՍԻՍ-ը (TACIS - Technical Assistance to the Commonwealth of Independent States), որը պետք է աջակցեր նորանկախ հանրապետություններին՝ հաղթահարելու անցումային շրջանի բարդությունները և տրամադրեր համապատասխան տեխնիկական օժանդակություն:

ԵՄ-ը սկսեց աջակցություն ցույց տալ նաև Հարավային Կովկասի հանրապետություններին Պարենային ապահովման ծրագրի (ՊԱԾ), Եվրոպական հանձնաժողովի մարդասիրական օգնության գրասենյակի (ECHO-Commission Humanitarian Aid Office) շրջանակներում:

Սոցիալական ոլորտը հետագա տարիներին ընդգրկվեց նաև ԵՄ-ի և Հարավային Կովկասի հանրապետությունների միջև 1996 թ. ապրիլին ստորագրված Գործընկերության և համագործակցության համաձայնագրերում (ԳՀՀ), ինչպես նաև

¹ Տես Սոցիալական իրավունքների մատչելիությունը Եվրոպայում (Ընդունվել է սոցիալական համախմբվածության եվրոպական հանձնաժողովի 8-րդ նիստում (Ստրասբուրգ, 2002 թ., մայիսի 28-30), եր., 2003, էջ 7:

² Տես Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում. Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան, 1999, էջ 39:

Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում ընդունված գործողությունների ծրագրերում:

Մեծ է եվրոպական կառույցների փորձագիտական, տեխնիկական օժանդակության նշանակությունը սոցիալական ոլորտի օրենսդրության և սոցիալական քաղաքականության մշակման գործում: Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո ընդունվել են սոցիալական ոլորտին առնչվող տասնյակ օրենքներ, ստորագրվել և վավերացվել են այդ ոլորտին վերաբերող միջազգային փաստաթղթեր, այդ թվում Եվրոպական սոցիալական խարտիան (ՀՀ կողմից ստորագրվել է 2001 թ., վավերացվել՝ 2004 թ.): Սակայն հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական խնդիրները բարդացնում են այդ բոլորը կյանքի կոչելու գործընթացը:

2000 թ. սեպտեմբերին Նյու Յորքում կայացած Հազարամյակի գագաթնաժողովում ստորագրվեց Հազարամյակի հռչակագիրը, որտեղ սահմանվեցին ութ գերակայություններ՝ Հազարամյակի զարգացման նպատակներ (ՀՁՆ). ծայրահեղ աղքատության և սովի վերացում, հիմնական կրթության համատարած ապահովում, գեներեյային հավասարություն և կանանց իրավունքների ընդլայնում, երեխաների մահացության նվազեցում, մայրական առողջության բարելավում, պայքար ՄԻՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների դեմ, շրջակա միջավայրի պաշտպանություն, զարգացման նպատակով գլոբալ համագործակցության ձևավորում:

Գագաթնաժողովից հետո ՀՁՆ-ին համապատասխան փոփոխություններ եղան նաև եվրոպական կառույցների, մասնավորապես ԵՄ-ի քաղաքականության մեջ: ԵՄ-ի աջակցության ծրագրերերում ընգծվեց առևտրի և զարգացման միջև կապի, տարածաշրջանային համագործակցությանն ու ինտեգրմանը, մակրո-էկոնոմիկ քաղաքականությանն ու սոցիալական ծառայություններից հավասար օգտվելու համարավորություններին աջակցելու անհրաժեշտությունը¹:

Հայաստանում աղքատության ցուցանիշները բավական բարձր էին. 2001 թ. բացարձակ աղքատության մակարդակը հասնում էր 50.9%-ի (աղքատ՝ 34.9%, շատ աղքատ՝ 16.0%), Ադրբեջանում և Վրաստանում՝ համապատասխանաբար՝ 49.6 և 51.1%-ի: Հակառակ տնտեսության արձանագրած հաջողություններին՝ աղքատության ծավալները դանդաղ էին նվազում. Վրաստանում 2003 թ. արձանագրվել էր 1997 թվականից ի վեր ՀՆԱ-ի ամենամեծ աճը՝ 8,6%: Դա պայմանավորված էր Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման հետ: Միևնույն ժամանակ, ըստ որոշ տվյալների, աղքատության գծից ցածր գտնվող բնակչությունը կազմում էր շուրջ 55 %, որից 17 %-ը ապրում էր ծայրահեղ աղքատության պայմաններում²:

1999 թ. Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից առաջ էր քաշվել Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրեր մշակելու անհրաժեշտությունը: 2003 թ. Հայաստանում ընդունվեց Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր (ԱՀՌԾ), որի իրականացմանը մասնակցեցին

¹ St'u Report on the Implementation of the European Commission's External Assistance, Situation at 01.01.01, European Commission Europe Aid Co-operation Office, D (2001) 32947, p. 8:

² St'u Common Country Assessment (CCA). Georgia, 2004, p. 27:

ნას ბიროკრატიული კაზნისებრი ტარებრი ბრავრებრი მხიჯონი ტრანაჟრეტილი ნიოქა-
ლანი, ჭორბაღიტალანი ოქანიოქლონი:

Աղქათოქანი ზაღქაზარმანი გორბონი აზაღნიაჟინი გრეჟილბოქანი ააქაზი-
ლიონი: ბოქორირიოქანი ჯრჯანონი ნაქსიქინი ბორირიოქანი ბერიბერიონი რაქლანი მბბ
ბი გორბაღრიოქანი მალაროქლი: ჯაქასთანონი 1998 ჭ. კაღნიონი ბი 9,3 %, ჭრას-
თანონი` 4,2 %, Աღრბეჯანონი` 1,1 %¹:

ჭრასთანონი გრეჟილბოქანი კაზნისებრი იბნას ბორირიოქანი შიოქანი
თარბინებინი ონიბი ბი აზანიბნაზატლოქონი: ჭრასთანის აქსათოქი მბბ ქა-
ზორიღი გრეჟილბი ბი გიოლოათნობოქანი მბბ, არიოინაბერიოქანი ჸ ჯინარაროქანი
მბბ გრეჟილბი ბი აქსათოქი 30 %-ი, მნაგაბი კაღნიონი ბინ აზოღქააზოქანი
ღ კრეოქანი ოლორინებრი აქსათოქონი: Աი ბი აათბაზი, ოი გორბაღრიოქანი
გოღანიქინებრი რაქლანი გაბი ბინ, ჯნაქაბ ანგონაჟინი ჯრჯანონი` 1990 ჭ., გიო-
ლოათნობოქონიონი გრეჟილბოქანი 25,6 %-ი ზასაქ 52,2 %-ი 1999 ჭ: შინნიონ
ქანანილ გრეჟილბოქონი არიოინაბერიოქანი ჸ ჯინარაროქანი ოლორთონი
ანლიონი აარბე 20 %-იგ მბბი 8 %²:

სნობოქანი აგათალანიგანი გორბიბაგბი ზბთლანიბოქლი თბი ონიბეგაქლი ნას
აქსათოქი თბილარბი აბთალანი ზათილბიგ იბაქი მასნაქლი: ბბ 1991 ჭ.
ჯაქასთანონი გრეჟილბოქონი მასნაქლი ზათილბი კაღნილი ბი თნობოქანი
მბბ გრეჟილბი 30,1 %-ი, ბსლ აბთალანი ზათილბი` 67,2 %-ი, ააქ 1998 ჭ.
აქნი კაღნიონი ბი ზანიაქათასქანაბარ` 66,2 % ჸ 32,6 %³: ჭრასთანონი 1990 ჭ.
აბთალანი ზათილბი ზაქილიონი ბი ჯორჯ 86 % ინიზანიორ გრეჟილბოქანი მბბ, ბსლ
1999 ჭ: მბბი 35 %-ი ბი აქსათონი აბთალანი ზათილბი⁴:

კარლი ბინიბი ბი ნას აქსათაქლიბი, ოი ჯათ ზაბაქი ჯბი ააქაზილიონი ნიონიბსლ
ნილაგაგოინი კბნააქაქანიბნი: ბრანილი ბი აქანიანაქლილბი აღქათოქონი
ბაღაქაქინი რნაქაქაქინი⁵:

ბნიქაბნი ნბბ ბნი, 2001 ჭ. ზაქასთანანი ბქსანიბოქონინებრი კოიბიგ სთ-
ორაგრიბე, ბსლ 2004 ჭ. ქაქბრაგვიბე ბიროქალანი სოქილალანი ბარბიანი:
ქაქბრაგვილბი ბოქლიბნი ბბილბილბი ბი აქსათანიბი ბრალიბნი, ბბილბილბი
ბრალიბნი, სოქილალანი ააქაზილბილბი, მბბოქანი ააქაქანილბილბი,
გაღქალანიბნი ბრალიბნი, ნას ზაქანიბანიბნი სოქილალანი ბნობგრიანი
ბრალიბნი⁶:

Աქსათანიბი ბრალიბნი ზბთ კაქლი ბინი მბბი ბრალიბნილბილბი ააქროსთ
ზაქაქბბილბი ზანიარ აქსათბილბი, არიარ ბბილბილბი, ანილბანიგ ჸ აზოღ

¹ სბი - , 2000, .63:

² სბი A Profile of the Labour Market in Georgia, Tbilisi, 2002, p.15, 18:

³ სბი შინაქანი ბ.ა., სოქილ-თნობალანი ბბილბილბი ჯაქასთანის ჯანიარაქბოქონიონი
(1990-2003 ჭბ.) ბი, 2003, ბ 177;

⁴ სბი A Profile of the Labour Market in Georgia, p.26:

⁵ სბი სნობალანი აბი, ანილბაბოქონილბი ჸ აღქათოქონილბი, ბი, 2002, ბ 64:

⁶ სბი ლრათონი ჯაქასთანონი ბიროქაქი ბორირი ბბილბილბილბი გრასბნილბი (CERA) 2004 ჭ.,
ბილ 2, ბ 28:

աշխատանքային պայմանների, արդար վարձատրության և սոցիալական պաշտպանվածության և այլն: Աշխատողների համար սահմանված են նաև քաղաքական իրավունքներ, ինչպիսիք են տնտեսական կամ սոցիալական շահերի պաշտպանության նպատակով միություններ կազմելու ազատությունը և համատեղ գործարքներ իրականացնելու իրավունքերը¹:

Ձբաղվածության խնդիրը փոխկապված է կրթական համակարգի հետ: ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին խորհրդային հանրապետություններում, այդ թվում նաև Հայաստանում, տեղի ունեցան տնտեսության կառուցվածքային փոփոխություններ: Աշխատանքի շուկայում առաջացան նոր մասնագիտություններ: Հետևաբար, կրթական բարեփոխումները կարող էին մեծապես նպաստել զբաղվածության խնդրի կարգավորմանը: Այս խնդիրները առաջնային էին ՏԱՄԻՍ, Տեմպուս ծրագրերի, Եվրոպական կրթական հիմնադրամի շրջանակներում:

Ձբաղվածության առումով կարևոր նշանակություն ուներ նաև փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) հիմնադրումը: ՓՄՁ-երի կշիռը զբաղվածության ոլորտում մեծ է զարգացած երկրներում. ԱՄՆ-ում՝ 50%, ճապոնիայում՝ 70 %, Գերմանիայում՝ 70%, Ֆրանսիայում՝ 57%²:

Հարավկովկասյան երկրներում մեծ չափերի հասավ աշխատանքային միգրացիան: Հարավային Կովկասի հանրապետություններում ևս միգրացիան տարեցտարի աճում է: Եթե 1990-ական թթ. սկզբին դա պայմանավորված էր գինված հակամարտություններով, ապա 1990-ական թթ. վերջում և 2000-ական թթ. այն արդեն սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետևանք էր: Այս խնդրի հետ է առնչվում մարդկանց առքուվաճառքի (թրաֆիքինգ) խնդիրը, որի դեմ պայքարի միջազգային առաջնային դերակատարներից մեկը ԵԱՀԿ-ն է: Հայաստանում 2001 թվականից ԵԱՀԿ-ը սկսեց աջակցել Հայաստանի իշխանություններին թրաֆիքինգը քրեականացնող օրենսդրություն մշակելու գործում, ներգրավվեց ՄՄԿ-ի և ՄԱԶԾ-ի նախաձեռնությամբ ստեղծված «Միջազգային աշխատանքային խմբի» շրջանակում անցկացվող քննարկումներին՝ միջոցառումներ իրականացնելով ոչ միայն հասարակության իրազեկման, այլ նաև այդ երևույթի զոհ դարձած անձանց իրավունքների վերականգնման և աջակցության ուղղությամբ:

Հազարամյակի զարգացման նպատակներից մեկը գենդերային հավասարությունն էր: Հարավկովկասյան հանրապետություններում զբաղվածության վերաբերյալ անցկացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս երկրներում կանայք կազմում են գործազուրկների գերակշիռ հատվածը: ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի տվյալներով 2000 թ. Հայաստանի Հանրապետությունում կանայք կազմում էին ընդհանուր գործազուրկների թվի 64,6 %-ը (տղամարդիկ՝ 35,4 %), Վրաստանում և Ադրբեջանում համապատասխանաբար՝ 52,6 % (տղամարդիկ՝ 47,4 %)

¹ Տես Սոցիալական իրավունքների մատչելիությունը Եվրոպայում, էջ 19:

² Տես Լավագույն փորձի ուղեցույց բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի համար, էջ 147:

և 55,9 % (տղամարդիկ՝ 44,1 %)՝: Տեղական իշխանության մարմիններում և գործարարություն (բիզնես) մեջ կանանց մասնակցությունը խրախուսելու, կանանց համար հնարավորությունների (ռեսուրս) կենտրոններ ստեղծելու ուղղությամբ քայլեր ձեռնարկվեցին ԵԱՀԿ-ի կողմից:

Եվրոպայի խորհրդի սոցիալական համախմբվածության ռազմավարության գլխավոր առանցքներից է սոցիալական ապահովության մատչելիության բարելավումը՝ հատկապես բնակչության անապահով խավերի համար²:

Խորհրդային Միությունում գործում էր սոցիալական պաշտպանության համակարգ՝ անվճար բուժժառայություններ, կրթություն և այլն: Մինչդեռ անկախության առաջին տարիներին առողջապահական ոլորտին տրվող պետական ծախսերը կտրուկ նվազեցին: Առողջապահության ոլորտի ֆինանսավորումը Հայաստանում նվազեց մինչև ՀՆԱ 1-3 %³:

Այս խնդիրների հաղթահարման նպատակով առավել կարևորվեց առողջապահության առաջնային օղակի զարգացման անհրաժեշտությունը, որն արդիական էր նաև Եվրոպայում: Այդ նպատակով քայլեր ձեռնարկվեցին ընտանեկան բժշկի ինստիտուտի ստեղծման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտար ծառայությունները դարձնել ավելի մատչելի:

Սոցիալական համաձայնության համար կարևոր նախախայյաման է հասարակության բոլոր խմբերի շահերի համաձայնեցվածությունը, ինչպես, օրինակ, երրորդ տարիքի անձանց ներգրավման, հաշմանդամների ինտեգրման խնդիրները: 1995 – 2000 թթ. կենսաթոշակառուների թվաքանակի փոփոխության վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց ընդհանուր թիվը նվազել է ավելի քան 81,8 հազար մարդով կամ 12,7 %-ով: Դա կարելի է բացատրել ինչպես կյանքի միջին տևողության նվազումով, այնպես էլ բնակչության արտագաղթով⁴: Պետությունը փաստորեն սահմանափակվում է կենսաթոշակի ապահովմամբ՝ հաշվի չառնելով, որ կենսաթոշակի չափերը խիստ անբավարար են: Երրորդ տարիքի անձինք հայտնվում են չապահովված և պասիվ սպառողի դերում⁵:

1992 թ. Հայաստանը միացավ հաշմանդամների իրավունքների ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի հռչակագրին, բայց ընդհանուր առմամբ այս խնդիրը շարունակում էր մնալ չլուծված, քանի որ հաշմանդամների ինտեգրման աստիճանը կրթական, մասնագիտական, աշխատանքի տեղավորման և զբաղվածության ոլորտում դեռևս մնում էր անբավարար: Հաշմանդամների զբաղվածության ասպարեզում

¹ Տե՛ս _____), (_____), _____, 2004, _____ . 74:

² Տե՛ս Սոցիալական իրավունքների մատչելիությունը Եվրոպայում, էջ 7:

³ Տե՛ս Հայաստանի Ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություն, 2000 թ., Եր., 2001, էջ 30:

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2000 թվականին, էջ 82:

⁵ Տե՛ս Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում, Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան. 1999, Եր., էջ 52:

հիմնական խնդիրները պայմանավորված են նաև երկրում գործազրկության առկայությամբ: Ըստ Սոցիալական ապահովության նախարարության տվյալների՝ 36123 աշխատունակ տարիքի հաշմանդամներից աշխատանքով ապահովված է միայն 23%-ը¹:

Այսպիսով, եվրոպական կառույցների հետ Հայաստանի Հանրապետության և հարավկովկասյան մյուս հանրապետությունների հարաբերությունների շրջանակներում սոցիալական ոլորտը զբաղեցնում է առաջնային տեղ: Վերջին երկու տասնամյակների ընթացքում այս ոլորտում արձանագրվել են ձեռքբերումներ, քիչ չեն նաև բացթողումները: Նախ սոցիալական իրավունքները հստակորեն ամրագրվեցին օրենսդրության մեջ, կատարվեցին գործնական քայլեր սոցիալական տարբեր խմբերի իրավունքները հստակեցնելու, սահմանելու ուղղությամբ: Այս ամենում իրենց մասնակցությունն ունեցան եվրոպական կառույցները: Նշենք նաև, որ նախաձեռնությունները երբեմն արժանանում էին քննադատության, քանի որ դրանք չէին կատարվում խորքային ուսումնասիրությունների հիմնա վրա, այլ եվրոպական մոդելը, որը ներկայացվում էր իբրև կատարյալ, ուղղակի ներդրվում էր Հայաստանում կամ մյուս հանրապետություններում՝ առանց հաշվի առնելու տեղական պայմանները և դրանց առանձնահատկությունները:

Էդուարդ Ջոհրաբյան, Արշալույս Տետեյան, Սոցիալական ոլորտը եվրոպական կառույցների հետ Հայաստանի և հարավկովկասյան հանրապետությունների հարաբերություններում – Սոցիալական իրավունքները եվրոպական ժողովրդավարական արժեքային համակարգի անբաժանելի մասն են կազմում: Տարիների ընթացքում մշակվել են այս ոլորտին առնչվող բազմաթիվ փաստաթղթեր: Սոցիալական ոլորտը տեղ գտավ նաև Հայաստանի և մյուս հարավկովկասյան հանրապետությունների և եվրոպական կառույցների հարաբերություններում: Եվրոպական կառույցները մասնակցություն ունեցան աղքատության հաղթահարման, զբաղվածության, սոցիալական ոլորտի մյուս հարցերի վերաբերյալ օրենսդրական բարեփոխումների գործընթացում՝ ցուցաբերելով փորձագիտական, տեխնիկական աջակցություն:

Эдуард Зохрабян, Аршалуйс Тетейн, Социальные проблемы в контексте интеграции Армении и южнокавказских стран в европейские структуры –

(, ,) .

¹ Նույնը, էջ 51:

Eduard Zohrabyan, Arshaluis Teteyan, Social problems and the process of integration of southcaucasian states in the European structures – Social problems are discussed in the article in the context of multilateral relations between southcaucasian states and European structures (EU, COE, OSCE). After collapse of Soviet Union former soviet republics including Republic of Armenia and the other southcaucasian states faced many problems in the field of social rights – poverty, migration, unemployment and etc. The article presents the initiatives and actions that were carried out in the field of social rights (legislation, mechanism of realization of this rights). The article also presents the role of European structures in this process.

*Էդուարդ Չոհրաբյան – պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
Արշալույս Տետեյան – ԵՊՀ հարակից երկրների պատմության ամբիոնի ասպիրանտ*

